

Ընտիր երկեր Բահայի Սուրբ Գրքերից

Սիրո վարդեր

Երևան - 2006

Միրո վարդեր

Տեքստեր մտորումների համար

Ընտրված մեջբերումներ Բահայի Սուրբ Գրքերից

© Հայաստանի Բահայիների Ազգային Հոգևոր Ժողով

ISBN 5-93283-016-6

Հազարավոր դռներ է Նա բացում այնտեղ, որտեղ մարդն ի վիճակի չէ երևակայել թեկուզ մեկը:

Քահանայվա

Յուրաքանչյուր մարդու մեջ անհրաժեշտ է տեսնել միայն այն, ինչն արժանի է գովեստի: Վարվելով այսպես՝ կարելի է բարեկամ լինել յուրաքանչյուրին: Իսկ եթե մենք մարդկանց դիտենք նրանց սխալների տեսանկյունից, ապա բարեկամությունը նրանց հետ կդառնա անասելիորեն դժվար խնդիր... Եվ այդ պատճառով մենք մեր հայացքն ուղղելով մարդկանց վրա՝ պետք է տեսնենք այն, ինչում նրանք հաջողության են հասել և ոչ թե այն, ինչում նրանք անհաջողություն են կրել:

Աբդուլ-Քահա

Ես կոչում եմ ձեզ բուրբիդ և յուրաքանչյուրին առանձին. ձեր սրտի մտքերն ուղղել սիրո և համաձայնության նվաճմանը: Եթե ձեզ այցելում է պատերազմի միտքը, դրան հակադրեք խաղաղության միտքը: Ատելության միտքը պետք է պարտվի սիրո՝ ավելի հզոր մտքով...

Մի՛ հուսահատվեք: Եղե՛ք հաստատակամ: Անկեղծությունն ու սերը կհաղթեն ատելությունը: Որքա՛ն անհնարին թվացող իրադարձություններ են կատարվում մեր օրերում: Մշտապես ձեր հայացքն ուղղեք խաղաղության Լույսին: Յուրաքանչյուր մարդու վերաբերվեք սիրով: Սերը Սուրբ Ոգու շունչն է մարդկային հոգում: Եղե՛ք անվեհեր: Աստված երբեք չի լքում Իր երեխաներին, որոնք ջերմեռանդ են աշխատանքում և աղոթքներում:

Աբդուլ-Քահա

Դուք միևնույն ժառի պտուղներն եք և միևնույն ճյուղի տերևները: Վերաբերվեք միմյանց մեծագույն սիրով և հնազանդությամբ, բարյացակամությամբ և ընկերության զգացումով... Միասնության լույսն այնքան հզոր է, որ ընդունակ է լուսավորել ողջ երկրագունդը:

Քահանայվա

Բարի խոսքը գրավում է մարդկանց սրտերը: Այն հոգևոր հաց է, որը խոսքին տալիս է իմաստ, այն իմաստունության և ըմբռնման լույսի աղբյուր է:

Քահանայվա

Ճշմարիտ են ասում Ես. շուրթերը կոչված են հիշատակելու այն, ինչը բարիք է, մի ապականեք դրանք անարժան խոսքերով: Տերը ներել է ձեր անցյալը: Այսուհետև յուրաքանչյուրը պարտավոր է բարբառել միայն այն, ինչ վայել է ու պատշաճ և խուսափել անարգանքից, լուտանքներից և այն ամենից, ինչ մարդկանց տխրություն է բերում:

Բահաուլլա

Երբ մարդը դիմում է Աստծուն, նա իր շուրջը տեսնում է լոկ արևի լույսը: Բոլոր մարդիկ նրա եղբայրներն են դառնում: Օտարերկրացիներին հանդիպելիս թույլ մի տվեք պայմանականություններին անտարբերության և սառնության պատճառ դառնալ... Բարյացակամությունը միայն խոսքերով մի արտահայտեք. թող ձեր սրտերը համակվեն սրտաբացությամբ և սիրով ձեր ճանապարհին հանդիպող բոլոր մարդկանց հանդեպ:

Աբդուլ-Բահա

Աստծուն վարձահատույց լինելու լավագույն միջոցը միմյանց սիրելն է:

Աբդուլ-Բահա

Ո՛վ, Ոգու որդի: Իմ առաջին խորհուրդն այսպիսին է՝ ունեցիր մաքուր, սիրող, լուսավայլ սիրտ և կհասնես նախահավիտենական, հավերժական, անսահման արքայության:

Բահաուլլա

Աստված չի թողնում Իր երեխաներին անմխիթար, և երբ ծննան խավարը խտանում է նրանց վրա, Աստված կրկին նրանց մոտ է ուղարկում նոր օրհնյալ գարուն բերող Իր Պատգամաբերերին՝ Մարգարեներին: Ճշմարտության Արևը նորից ծագում է աշխարհի հորիզոնում և լույս տալիս քնածների աչքերին՝ արթնացնելով նրանց, որպեսզի նրանք տեսնեն նոր օրվա փառքը: ԵՎ այդ ժամանակ մարդկության ծառը նորից ծաղկում է և տալիս արդարության պտուղ, որն ապաքինում է ժողովուրդներին:

Աբդուլ-Բահա

Ո՛վ, Ոգու որդի: Իմ աչքերում ամենասիրած բանն արդարությունն է: Մի շրջվիր դրանից, եթե ձգտում ես դեպի Ինձ և մի արհամարիտ այն, որպեսզի Ես կարողանամ վստահել քեզ: Դրա օգնությամբ կտեսնես քո աչքերով և ոչ՝ ուրիշի, կձանաչես քո ըմբռնումով և ոչ՝ մերձավորի: Խորհիր այդ մասին քո սրտում, ինչպես պատշաճ է քեզ: Հիրավի, արդարությունն Իմ նվերն է քեզ և Իմ քնքուշ խնամքի նշանը: Ուրեմն, զետեղիր այն քո աչքերի առջև:

Բահաուլլա

Եթե մարդու կյանքը մինչև ծնվելն ավարտվեր արգանդային աշխարհում, ապա այնտեղի գոյությունը կլիներ անիմաստ, աննպատակահարմար: Նույն կերպ, եթե կյանքն այս աշխարհում, այստեղ կատարվող գործերն ու արարքները և դրանց պտուղները չարտահայտվեին այլ աշխարհում, այդ ամբողջ ընթացքը կլիներ անտրամաբանական և անիմաստ:

Աբդուլ-Բահա

Սերն արտահայտվում է գործերով և ոչ թե խոսքերով. միայն խոսքերն անօգուտ են:

Աբդուլ-Բահա

Բոլոր մարդիկ ստեղծված են, որպեսզի առաջ տանեն հավերժ զարգացող քաղաքակրթությունը... Մարդուն վայել չէ վարվել վայրի գազանի նման: Նրա արժանապատվությանը վայել առաքիներություններն են համբերությունը, գթասրտությունը, կարեկցանքը և բարությունը երկրագնդի բոլոր ժողովուրդների և ցեղերի հանդեպ:

Բահաուլլա

Որքան հաճախ ենք մենք տեսնում աղքատ, հիվանդ, վատ հագնված, գոյության համար միջոցներ չունեցող, բայց աննկուն ոգով մարդկանց: Ինչպիսին էլ լինեն նրանց ֆիզիկական տառապանքները, նրանց ոգին մնում է ազատ և առողջ: ԵՎ հակառակը, որքան հաճախ ենք մենք հանդիպում հարուստ, ֆիզիկապես ուժեղ և առողջ մարդկանց՝ անհուսալիորեն հիվանդ հոգով:

Աբդուլ-Բահա

Ես ցանկանում եմ, որ դուք երջանիկ լինեք... որ դուք ծիծաղեք և ուրախություն ճառագեք, որ ուրիշները, նայելով ձեզ, նույնպես երջանկություն զգան:

Աբդուլ-Քահա

Եղիր քո տրամադրության ոչ թե ստրուկն, այլ տերը: Բայց եթե դու այնքան բորբոքված ես, այնքան ճնշված և այնքան խոցելի, որ քո ոգին փրկություն և հանգստություն չի գտնում նույնիսկ աղոթքներում, ապա շտապիր ուրախություն պատճառել թշվառին, տրտմողին, անմեղ կամ անգամ արժանիորեն տառապողին: Ջոհաբերիր ինքդ քեզ, քո շնորքը, քո ժամանակը, քո հանգիստը ուրիշին՝ նրան, ում այժմ ավելի դժվար է, քան քեզ, և այդ ժամանակ, շնորհիվ Աստծու առջև քո բարեպաշտ հնազանդության, քո ծանր հոգեվիճակը կչքանա:

Աբդուլ-Քահա

Անհրաժեշտ է ձգտել ավելի վեհ բանի, քան մեր երկրային հոգսերն են. հեռանալ նյութականի մասին մտքերից, փափագել հոգևորը: Հառեք ձեր հայացքն Ամենակարողի հավերժ բարեհաճ Ողորմածությանը, Որը մեր հոգիները կլցնի Նրա՝ «Սիրեցեք միմյանց» կտակին ծառայելու բերկրանքով:

Աբդուլ-Քահա

Կատարյալ սերն ամեն տեսակի կապանքներից լիովին ազատ լինելու անշահախնդիր միջոցների կարիք ունի: Սերն ընտանիքի հանդեպ անկատար է, քանի որ արյունակից ազգակցության կապերն ամենաամուրներից չեն: Հաճախ միևնույն ընտանիքի անդամներն ապրում են անհամաձայնության մեջ և նույնիսկ ատում միմյանց:

Հայրենասիրությունը հարաբերական զգացմունք է. սեփական երկրի հանդեպ սերը՝ զուգակցված այլ երկրների հանդեպ ատելությամբ, անկատար սեր է: Անգամ հայրենակիցներն են մտնում երկպառակությունների մեջ:

Սերը սեփական ժողովրդի հանդեպ սահմանափակ է: Չնայած այստեղ առկա է որոշոկի միասնություն, այն ակնհայտորեն բավական չէ: Սերը պետք է սահմանափակումներից ազատ լինի:

Սերը սեփական ժողովրդի հանդեպ կարող է զուգակցվել այլ ռասայի մարդկանց հանդեպ ատելությամբ, ընդ որում, անգամ մի ռասայի ներկայացուցիչները կարող են անբարյացակամությամբ վերաբերվել միմյանց:

Որևէ քաղաքական հայացքների հանդեպ կողմնակցությունը հանգեցնում է մի կուսակցության ատելությանը մյուսների նկատմամբ. այդպիսի սերը բավականին անկատար է և անապահով:

Նույնքան փոփոխական է նաև հետաքրքրությունների ընդհանրության վրա հիմնված սերը. հաճախ ի հայտ է գալիս խանդ առաջացնող մրցակցության զգացում, և արդյունքում սիրո փոխարեն առաջանում է ատելություն...

Սիրո այդպիսի կապերն ամուր չեն: Ակնհայտ է, որ նյութական աշխարհի անկատար հարաբերությունները բավական չեն համընդհանուր սիրո իսկական արտահայտման համար...

Եթե դուք սիրում եք ձեր ընտանիքի անդամին կամ հայրենակցին, թող այդ զգացմունքը լուսավորվի Անվերջ Սիրո շողերով: Թող այն լինի Աստծու հետ և Աստծու համար: Որ մարդու մեջ էլ դուք տեսնեք Աստվածային հատկանիշներ, սիրեք նրան՝ լինի դա ձեր, կամ այլ ընտանիքի անդամ: Անսահման սիրո լույսը սփռեք յուրաքանչյուրի վրա, ում կհանդիպեք ձեր ճանապարհին՝ թե՛ ձեր երկրում, թե՛ ձեր ժողովրդի մեջ, թե՛ ձեր քաղաքական կուսակցության անդամների մեջ՝ անկախ նրանց մաշկի գույնից, ազգությունից կամ քաղաքական պատկանելիությունից: Երկինքը ձեզ կօգնի, երբ դուք սկսեք հավաքել ամբողջ աշխարհով ցիրուցան եղած ժողովուրդները ամենագոր միասնության վրանի հովանու տակ:

Արդուլ-Բահա

Ո՛վ, Ոգու որդի: Ես քեզ հարուստ ստեղծեցի, ինչու՞ ես դու ընկնում աղքատության մեջ: Ես քեզ վեհանձն ստեղծեցի, ինչու՞ ես դու քեզ նվաստացնում: Գիտելիքի բուն էությունից Ես քեզ ստեղծեցի, ինչու՞ ես դու Ինձանից բացի ուրիշ գիտելիք փնտրում: Ես քեզ սիրո կավից կերտեցի, ինչպե՞ս ես դու զբաղված ուրիշով: Հայացքդ ուղղիր քո ներսը և կտեսնես, թե ինչպես եմ Ես կենում քո մեջ՝ ուժեղ, զորեղ, ինքնագո:

Բահաուլլա

Երբ շփվում եք այն մարդկանց հետ, որոնց կարծիքները տարբերվում են ձեր կարծիքներից, մի շրջվեք նրանցից: Բոլորը ճշմարտություն են փնտրում, իսկ դեպի ճշմարտություն տանող ճանապարհները բազմաթիվ են: Ճշմարտությունը շատ կողմեր ունի, բայց միշտ և հավիտյանս հավիտենից այն մնում է միակը:

Թույլ մի տվեք տարածայնություններին կամ կարծիքների զանազանությանը ձեր և ձեր մերձավորների միջև օտարացման պատճառ կամ ձեր սրտերում վեճերի, խռովությունների և ատելության առիթ դառնալ:

Արդույ-Բահա

Ո՛վ, գոյի որդի: Ամեն օր ինքդ քո առջև հաշիվ տուր, նախքան քեզ պատասխանի կկանչեն, քանզի մահը քեզ մոտ կգա հանկարծակի և քեզանից հաշիվ կպահանջեն քո գործերի համար:

Բահաուլլա

Թշնամության հիմնական պատճառը կրոնական առաջնորդների և քարոզիչների կողմից կրոնի բուն էության խեղաթյուրված մեկնաբանությունն է: Նրանք ներշնչում են իրենց հետևորդներին, որ նրանց դավանած կրոնն Աստծուն հաճելի միակ կրոնն է, և որ ցանկացած այլ դավանանքի կողմնակիցներն անիծված են Սիրառատ Հոր կողմից, զրկված են Նրա ողորմածությունից և վերին օգնությունից: Դա մարդկանց մեջ ծնում է տարածայնություններ, մեծամտություն, խռովություններ և ատելություն: Եթե հաջողվեր ազատվել այդ կրոնական նախապաշարմունքներից, ապա ժողովուրդները շուտով ձեռք կբերեին խաղաղություն ու համերաշխություն:

Արդույ-Բահա

Ո՛վ, Տիրոջը սիրողներ: Բարի եղեք բոլոր ժողովուրդների հանդեպ, կարեկցեք յուրաքանչյուր մարդուն, արեք՝ ինչ հնարավոր է, որպեսզի մաքրվեն մարդկանց սրտերը և մտքերը, ձգտեք ուրախացնել ամեն մի հոգին: Ամեն մարգագետնի համար եղեք բարեբեր տարափ, ամեն ծառի համար՝ կենսարար ջուր, մարդկության ընկալման համար նման եղեք նուրբ մուշկի բուրմունքին, տառապողի համար եղեք թարմ վերածնող շունչ: Ցանկալի ջուր եղեք բոլոր ծարավների համար, հոգատար ուղեկցող եղեք ճանապարհից բոլոր շեղվածների համար, դարձեք հայր ու մայր

որքին, սիրող որդի կամ դուստր՝ ծերունուն, առատ գանձատուն՝ աղքատին: Սերը և անկեղծ բարեկամությունը պաշտեք որպես երկնային երանություն, իսկ թշնամությունը և ատելությունը համարեք դժոխային տանջանքներ:

Աբդուլ -Բահա

Ո՛վ, մարդկային որդի: Ամեն մի իրին՝ իր նշանը: Սիրո նշանը կայունությունն է այն բանում, ինչը նախանշել եմ Ես և համբերությունն է Իմ փորձություններում:

Բահաուլլա

Ձեր գլխավոր պարտքն այս օրը բնավորությունների կատարելագործումը, բարքերի ուղղումն ու ձեր վարքի լավացումն է: Ողորմածի սիրեցյալները պետք է Նրա ստեղծածների մեջ ցուցաբերեն այնպիսի բնավորություն և այնպիսի վարք, որպեսզի նրանց սրբության բուրմունքները պատեն ամբողջ աշխարհը և վերակենդանացնեն մեռածներին...

Աբդուլ-Բահա

Ո՛վ, մարդկային որդի: Եթե քեզ բարեկեցություն վիճակվի, մի ուրախացիր, իսկ եթե բաժին ընկնի նվաստացում, մի տխրիր, քանի որ և՛ մեկը, և՛ մյուսը կանցնեն ու հավետ կվերանան:

Բահաուլլա

Բազմազանությունը մարդկային ընտանիքում պետք է դառնա սիրո և համերաշխության աղբյուր. այդպես երաժշտության մեջ տարբեր ձայների բազմությունը միաձուլվում է կատարյալ ներդաշնակության մեջ: Եթե դուք հանդիպեք այլ ազգի կամ այլ մաշկի գույնով մարդկանց, նրանց հանդեպ մի ցուցաբերեք անվստահություն և մի թաքնվեք պայմանականությունների կեղևի տակ, այլ ողջունեք նրանց ուրախությամբ և վերաբերվեք նրանց բարությամբ: Մտածեք նրանց մասին՝ որպես մարդկության հրաշագեղ այգում աճող տարբեր գույնի վարդերի և հրձվեք, որ գտնվում եք նրանց մեջ:

Աբդուլ-Բահա

Ո՛վ, մերձավոր Իմ գահի: Ականջ մի դիր չարին և մի նկատիր չարը, մի նսեմացիր, մի տրտմիր և մի հեծեճա: Չարախոս մի եղիր, որպեսզի չար խոսքեր չլսես և մի չափազանցրու ուրիշների արատները, որպեսզի քո սեփական արատները մեծ չթվան, և մի ցանկացիր ոչ մեկի նվաստացումը, որպեսզի քո նվաստացումը չդառնա ակնհայտ: Թող, որ ապրես օրերը քո կյանքի, որ կարճ ակնթարթից էլ կարճ են, անարատ մտքով, անբիծ սրտով, մաքուր մտադրություններով և անմեղ հոգով, որպեսզի ազատ և ուրախ դեն նետես այս մահկանացու թաղանթը և վերադառնաս նվիրական դրախտ ու բնակվես ամնահ արքայությունում հավիտյանս հավիտենից:

Բահաուլլա

Հավատի էությունը խոսքերի փոքրաթիվությունն է և գործերի առատությունը...

Բահաուլլա

Չնայած մահն ավերում է մարդկային մարմինն, այն անկարող է նրա ոգու դեմ՝ հավերժ, անանցողիկ, ծնունդ և մահ չունեցող:

Աբդուլ-Բահա

Միավորվեք եղբայրական սիրով, պատրաստ եղեք ձեր կյանքը տալ միմյանց համար և ոչ միայն նրանց համար, ով թանկ է ձեզ, այլ նաև ամբողջ մարդկության համար: Բոլոր մարդկանց համարեք մի ընտանիքի անդամներ, չէ՞ որ բոլոր մարդիկ Աստծու զավակներն են, և այդ ժամանակ նրանց միջև չեք տեսնի ոչ մի տարբերություն:

Աբդուլ-Բահա

Ո՛վ, Իմ ծառա: Մաքրիր սիրտդ չարությունից և առանց նախանձություն տածելու մտիր սրբության աստվածային կացարանը:

Բահաուլլա

Ծնողների անխախտ պարտքն է դաստիարակել իրենց երեխաներին անսասան հավատի ոգով, քանզի Աստվածային կրոնից խլված երեխան չի ձգտի արժանանալ իր ծնողների և իր Տիրոջ բարեհաճությանը: Քանզի ամեն մի գովելի

գործողություն ծնվում է կրոնի լույսից և այս բարձրագույն պարզևից զրկված երեխան չի շրջվի չարից և չի մոտենա բարուն:

Բահաուլլա

Եթե մայրը տեսնում է, որ երեխան որևէ լավ բան է արել, նա պետք է գովաբանի և խրախուսի նրան ու դրանով ուրախացնի նրա սիրտը: Իսկ եթե երեխայի մեջ ի հայտ գա գեթ փոքրագույն վատ հակում, մայրը պետք է խոսի նրա հետ և պատժի նրան՝ դիմելով խելամիտ մեթոդների, անգամ, եթե պահանջվի՝ թեթև բանավոր նախատինքի:

Աբդուլ-Բահա

Քանի որ կրոնը դաստիարակում է բարոյականություն, ապա այն է իսկական փիլիսոփայությունը, և միայն դրա հիման վրա կարող է ստեղծվել ամուր քաղաքակրթություն:

Աբդուլ-Բահա

Ամեն քայլափոխին մեզ դարանակալող փորձությունները, մեր բոլոր դժբախտությունները և տառապանքները, նվաստացումներն ու դառնությունները նյութական աշխարհի ծնունդ են, իսկ ոգու Արքայությունում ոչինչ տխրություն չի առաջացնում: Այս Արքայությունում իր մտքերով ապրող մարդն անվերջ ուրախություն է զգում:

Հիվանդությունները՝ մարմնականի ծնունդը, չեն շրջանցում նրան, բայց դրանք վերաբերվում են միայն նրա կյանքի արտաքին կողմին, իսկ դրա խորքերը մնում են հանգիստ և անխռով:

Աբդուլ-Բահա

Հավասարությունն ու արդարությունը մարդկանց պաշտպանող բուն Պահապան-երկվորյակներն են: Նրանցից բխում են այնքան պարզ և օրհնյալ խոսքեր, որ աշխարհին բերում են բարեկեցություն և ժողովուրդներին՝ պաշտպանություն:

Բահաուլլա

Այս Օրն Աստծու Հավատի և Նրա Կրոնի էությունն այն է, որ երկրագնդի տարբեր համայնքները և բազմաթիվ դավանաբանությունները մարդկանց մեջ ոչ մի կերպ չճնեն անգամ փոքրագույն թշնամության զգացում: Այս կանոններն ու օրենքներն, այս ամուր ու զորեղ ուսմունքները բխում են մի Աղբյուրից և միևնույն Լույսի ճառագայթներն են: Իսկ դրանց տարբերությունները միմյանցից բացատրվում են դարաշրջանների տարբեր պահանջներով, որոնցում դրանք հռչակվել են:

Բահաուլլա

...Բոլորի հետ շփվեք բարեկամության և եղբայրության ոգով: Եթե դուք հաղորդակցվել եք որևէ ճշմարտությանը, եթե դուք ունեք թանկարժեք մի բան, որ չունեն ուրիշները, կիսվեք դրանով՝ դիմելով մեծագույն բարության և բարյացակամության լեզվին: Եթե ճշմարտությունն ընդունվի և դրա կոչումը կատարվի, ապա ձեր նպատակը կկատարվի: Իսկ եթե որևէ մեկն այն մերժի, թողեք նրան իր կամքին և աղաչեք Աստծուն, որպեսզի Նա այդ մարդուն ուղղի ճշմարտության ճանապարհով:

Բահաուլլա

Հիրավի, գիտելիքը մարդու համար իսկական գանձ է, այն փառքի, վերին օգնության, ուրախության, վեհացման, խնդության և գոհության աղբյուր է: Երջանիկ է նա, ով ձգտում է դրան և վա՛յ անփութաջանին:

Բահաուլլա

Ո՛վ, հոգով մաքուր: Հետևիր ճշմարտախոսի հետքերին և քայլիր առաքինու ճանապարհով, որպեսզի ճշմարտախոսության շնորհիվ դու կարողանաս բարձրանալ Ճշմարտության Գահին, իսկ առաքինության շնորհիվ՝ հասնել անանց պատիվներին: Եթե աշխարհի բոլոր մեղքերը դրվեին կշեռքի մի նժարին, իսկ կեղծությունը՝ մյուսին, ապա այդ նժարները կհավասարվեին. ո՛չ, կեղծությունը կգերակշռեր՝ դրանով իսկ ցույց տալով, որ դրա պատճառած վնասն ավելի կշռելի է: Ավելի լավ է սրբապիղծ լինել, բայց ասել ճշմարտությունը, քան բարբառել հավատի դավանանքներ և այդ պարագայում լինել ստախոս:

Աբդուլ-Բահա

Ձգտեք այն բանին, որ օրեցօր ձեր գործերը նման լինեն սքանչելի աղոթքների:
Դիմեք Աստծուն և ձգտեք միշտ վարվել առաքինի ու ազնվաբար:

Օգնեք աղքատներին, բարձրացրեք ընկածներին, ապաքինեք հիվանդներին,
քաջալերեք երկչոտներին, ազատեք հալածվածներին, հավատ ներշնչեք
հուսահատվածներին, ապաստան տվեք անօթևաններին: Մեր սրտերի գիրքը
կարդացող Աստծուն հայտնի է, թե ինչ չափով ենք մենք մեր խոսքերն իրագործում
կյանքում:

Աբդուլ-Քահա

Ո՛վ, գոյի որդի: Մի հրապուրվիր այս աշխարհով, քանզի կրակով ենք Մենք
փորձարկում ոսկին, իսկ ոսկով փորձում ենք Մեր ծառաներին:

Աբդուլ-Քահա

Հոգեկան երանությունը մարդկային կյանքի իսկական հիմքն է, քանզի կյանքն
երկրի վրա ստեղծված է երջանկության համար, այլ ո՛չ տագնապների, ուրախության
համար, այլ ո՛չ վշտի:

Աբդուլ-Քահա

Բ Ա Հ Ա Յ Ի Հ Ա Վ Ա Տ Ը

Բահաուլլան՝ Բահայի Հավատի հիմնադիրը, սովորեցնում էր, որ Աստված միակն է, որ բոլոր կրոնները «Աստծու հանդեպ անփոփոխ՝ անցյալում հավերժ, ապագայում հավերժ Հավատի» արտահայտումն են, որ մարդկությունը միասնական ժողովուրդ է, որը պետք է ապրի խաղաղ և համերաշխ:

Բահաուլլայի Ուսմունքում պարունակվում են հիմնադրական հոգևոր ճշմարտություններ՝ ընդհանուր բոլոր կրոնների համար, ինչպես նաև օրենքներ և կարգադրագրեր, որոնք սահմանում են Բահայի կրոնի առանձնահատկությունները և նախատեսված են մեր պատմական դարաշրջանում մարդկության առջև կանգնող խնդիրների լուծման համար: Այդ խնդիրների արմատը մարդկանց ոչ բավական հոգևորության և նրանց մեկուսացման մեջ է:

«Աստված Իր Մարգարեներին ուղարկում է մարդկանց մոտ երկակի դիտավորությամբ: Առաջինը՝ մարդկային զավակներին ազատել տգիտության խավարից և դուրս բերել նրանց դեպի իսկական ըմբռնման լույսը: Երկրորդը՝ մարդկությանը խաղաղություն և հանգստություն ապահովել և տալ բոլոր միջոցները, որոնցով դրանք կարող են հաստատվել: Աստվածային Մարգարեների մեջ պետք է տեսնել բժշկողների, ում պարտքն է խնամք տանել աշխարհի և դրա ժողովուրդների բարեկեցության համար: Իսկ ի՞նչ զարմանալի բան կա, որ բժշկի այսօրվա նշանակված բուժումը տարբերվում է նախկինում նշանակվածից»:

(Բահաուլլա)

Ահա Բահայի Ուսմունքի որոշ սկզբունքներ.

- Աստված միակն է ամբողջ մարդկության համար:
- Աստծու բոլոր հայտնած կրոնները միասնական են իրենց հիմքում:
- Մարդկությունը միասնական է իր բազմազանության մեջ:
- Մարդկանց բաժանող ամեն տեսակի նախապաշարմունքներ, լինեն դրանք ռասայական, ազգային, դասակարգային, քաղաքական կամ կրոնական, պետք է անհետ կորչեն:
- Տղամարդիկ և կանայք պետք է ունենան հավասար իրավունքներ և հնարավորություններ:
- Կրոնը կոչված է ներդաշնակ լինել բանականության և գիտության հետ:
- Կրոնը պետք է սիրո և բարեկամության աղբյուր լինի:

- Յուրաքանչյուր մարդ ընդունակ է և պարտավոր ինքնուրույն փնտրել ճշմարտությունը:
- Սոցիալական և տնտեսական խնդիրները կարող են լուծվել միայն հաշվի առնելով հոգևոր սկզբունքները:
- Աշխարհին պետք է միջազգային օժանդակ լեզու:
- Մոլորակի վրա համընդհանուր խաղաղության և համերաշխության նվաճման համար անհրաժեշտ է ժողովուրդների համաշխարհային դաշնության ստեղծում:

Բահայի Հավատի հետևորդներն իրենց ջանքերն ուղղում են համաշխարհային քաղաքակրթության ստեղծմանը, որում այդ սկզբունքները կիրականացվեն գործնականում: Դրա իրական գործող մոդելը Բահայի Համաշխարհային Համայնքն է:

Բահայի Համայնքին հաջողվեց խուսափել պառակտումից և անկումից, քանի որ Բահաուլլան Հավատի գլուխ և Սուրբ Գրքերի միակ լիազորված մեկնաբան նշանակեց Իր ավագ որդի Աբդուլ-Բահային (1844-1921): Հետագայում Աբդուլ-Բահան Հավատի գործերի ղեկավարությունը փոխանցեց իր թոռ Շոդի Էֆենդիին (1897-1957), իսկ 1963 թվականից Հավատի հարցերում բարձրագույն հեղինակությունն է Արդարության Համաշխարհային Տունը՝ ընտրովի կոլեկտիվ մարմինը, որի ստեղծումը նախատեսված էր Բահաուլլայի Սուրբ Գրքերում:

Տեղական և ազգային մակարդակներում ղեկավարությունը իրականացնում են նաև կոլեկտիվ մարմինները (Հոգևոր Ժողովները), որոնք ամեն տարի վերընտրվում են: Ընտրություններն անցկացվում են բոլոր հավատացյալների մասնակցությամբ գաղտնի քվեարկության ճանապարհով, առանց թեկնածուների նախնական առաջադրման: Հոգևոր Ժողովներում ընտրվածները չունեն ոչ մի անձնական իշխանություն կամ արտոնություններ: Բահայի Հավատում չկան հոգևորականներ:

Հայաստանում Բահայի համայնքները ծագել են դեռ Բահաուլլայի օրոք՝ երբ Հայաստանը մտնում էր Ռուսական Կայսրության մեջ: Վերջինս Բահայի Հավատի պատմական զարգացման մեջ նշանավոր դեր խաղացած երկրներից մեկն է: Այսպես, 1889թ. ռուսաստանյան դատարանը պատմության մեջ առաջին անգամ ճանաչեց Բահայի Հավատի անկախ բնույթը՝ որպես ինքնուրույն կրոն և հանդես եկավ որպես դրա հետևորդների պաշտպան: Այդ տարիների Հայաստանի համայնքները ունեին

նաև կառավարման վարչական մարմին՝ Բահայիների Ազգային Հոգևոր Ժողովը, որի իրավասությունները տարածվում էին նաև Անդրկովկասի բահայիների վրա: Այդ ժողովը գործել է մինչև 1938թ., որից հետո լուծարվել է Սովետական իշխանության պահանջով:

Սովետական Միության փլուզումից հետո՝ ժողովրդավարության առաջին տարիներին, համայնքը առաջին անգամ պաշտոնապես գրանցվեց որպես «Երևանի Բահայիների Համայնք»:

Հազարավոր դռներ է Նա բացում այնտեղ, որտեղ մարդն

ի վիճակի չէ պատկերացնել անգամ մեկը:

Բահաուլլա